




Ա. Կիրակի Յայտնութեան Ութօրէքէն Ետք



ԺԱՄԱՍՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Էութիւն, որ յանձն առիր մարմնանալ Սուրբ եւ միշտ Կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Զօր եւ Զոգույն հետ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԲԶ.

Օրհնութիւն մատուցանենք յաւերժի Թագաւորին, որ մարմնացաւ Կոյսէն, աշխարհս հաստատեց անսասան հաւատքով, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Բանն Աստուած որ կամովին համբերեց խաչի մահուան եւ իր սուրբ արիւնը թափեց տիեզերքի փրկութեան համար, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Աստուածօրէն յարութիւն առաւ Նորափոր վէմէն, լուսաւորեց իր սուրբ Եկեղեցին ի փառս եւ ի գովեստ իր անուան, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

ՄԵՍԵՂԻ (Սղմ. 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:
Աղօթքներս լսէ՛ եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՎՏԱՆԳ ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

**Պօղոս Առաքեալին Տիմոթէոսին ուղղած առաջին թուղթէն Է ընթերցուածը.
(1. Տիմ. 1, 1 - 11)**

Պօղոս, Առաքեալ Զրիստոս Յիսուսի, ըստ հրամանին Աստուծոյ մեր Փրկչին, եւ Զրիստոս Յիսուսի՝ մեր յոյսին. Տիմոթէոսի, մեր սիրելի որդիին հաւատքի մէջ, շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն Յօր Աստուծոյ եւ մեր Տիրոջ Զրիստոս Յիսուսի կողմէ:

Մինչ ես Մակեդոնիա կը մեկնէի, խնդրեցի քեզմէ մնալ Եփեսոս եւ ազդարարել ոմանց, որ դադրին օտարոտի վարդապետութիւններ սորվեցնելէ, չկապւին առասպելներու, անվերջ ազգաբանութիւններու, որոնք մանաւանդ խնդիրներ կը յարուցանեն, բայց չեն ծառայեր Աստուծոյ ծրագիրներուն, որոնք հիմնուած են հաւատքի վրայ: Գլխաւոր պատուիրանը սերն է, որ կը բխի սուրբ սրտէ, մաքուր խիղճէ եւ անկեղծ հաւատքէ: Ոմանք վրիպեցան ասոնցմէ եւ խոտորեցան ունայն ասութիւններու մէջ, կը յաւակնին օրէնքի վարդապետներ ըլլալ, մինչդեռ չեն իսկ գիտեր թէ ինչ կը խօսին կամ ինչ բանի շատագոյ յեն:

Գիտենք թէ օրէնքը լաւ է, եթէ մեկը գործադրէ զայն օրինաւոր կերպով, գիտնալով որ ան ոչ թէ արդարին համար հաստատուած է, այլ՝ անհնազանդներուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն



րուն եւ մեղաւորներուն, սրբապիղծներուն եւ անմաքուրներուն, հայրասպաններուն եւ մայրասպաններուն, մարդասպաններուն եւ ոճրագործներուն, պռնիկներուն եւ արուագետներուն, աւագակներուն, ստախօսներուն եւ երդմագանցներուն եւ անոնց համար, որոնք կը հակառակին ողջամիտ վարդապետութեան, որ համաձայն է Երանելոյն Աստուծոյ Փառքի Աւետարանին, որուն ես հաւատարիմ եղայ:

Ալելուիա, Ալելուիա,

Խօսքս կ'ուղղեմ ձեզի, դո՛ւք, հեթանոս բոլոր ժողովուրդներդ ծափ զարկէ՛ք, ուրախութեան կանչերով Աստուծոյ աղաղակեցէ՛ք:

(Սղմ. 46, 2)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻԸ (Յովհ. 2, 1-11)

Տերն մեր Յիսուս Զրիստոս. երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլիոյ Կանա քաղաքին մէջ եւ Յիսուսի մայրը հրաւիրուած էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուեցան: Գինին պակսեցաւ եւ Յիսուսի մայրն ըսաւ իրեն. «Գինի չունին»: Յիսուս պատասխանեց. «Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ո՛վ կին, քանի որ տակաւին ժամս չէ հասած»: Մայրն ըսաւ սպասաւորներուն. «Ըրէ՛ք ինչ որ հրամայէ ձեզի»: Այն տեղ կային քարէ վեց թակոյկներ, իւրաքանչիւրը երկու կամ երեք մար տարողութեամբ եւ որոնք սահմանուած էին հրեաներու լուացումներուն: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Թակոյկները ջուրով լեցուցէք»: Եւ լեցուցին զանոնք մինչեւ բերան: «Հիմա, ըսաւ Յիսուս, ամէք եւ տարէք սեղանապետին»: Առին եւ տարին: Սեղանապետը երբ ճաշակեց գինիի փոխուած ջուրը եւ չգիտնալով թէ ուրկէ էր - թէպէտ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին - փեսային դիմեց եւ ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ եւ երբ հրաւիրեալները արբեման, այն ատեն կը հրամցնէ



վատորակ գինին: Իսկ դուն ընդհակառակը, ընտիր գինին մինչեւ հիմա պահեցիր»: Ասիկա եղաւ սկիզբը Յիսուսի նշաններուն Գալիլիոյ Կանայի մէջ: Յայտնեց իր փառքը եւ աշակերտները հաւատացին իրեն:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻԸ

Յովհաննէս Աւետարանիչը կը նկարագրէ Գալիլիոյ «Կանա» քաղաքին մէջ կայացած հարսանիք մը, որուն հրաւիրուած էին Աստուածամայրը, իր Որդին եւ կարգ մը աշակերտներ:

Հարսանիքի ժամանակ անոյշ գինին կը պակսի: Հետաքրքրական է որ ո՛չ սեղանապետը եւ ոչ ալ սպասաւորները կ'անդրադառնան այդ պակասին, հակառակ անոր որ իրենց կ'իյնայ պարտականութիւնը սեղանին պետքերը ապահովելու եւ պակասները միշտ լեցնելու: Սեղանէն կը պակսի ամենէն էականը՝ գինին, որ խորհրդանշի է ուրախութեան, կենացի: Հետեւաբար,

Յիսուսի Մայրն է, որ կ'անդրադառնայ այդ էական պակասին, եւ Յիսուսին կը դիմէ ըսելով «գինի չունին»:

Յիսուսի պատասխանը իր Սօր «Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ո՛վ կին, քանի որ տակաւին ժամս չէ հասած» կրնայ նուաստացում մը թուիլ Աստուածամօր հանդէպ, սակայն այս խօսքով, Յիսուս կ'ուզէր ըսել թէ իր փառաւորութեան ժամը, այսինքն խաչի եւ մահու ժամը տակաւին չէ հասած՝ գինին նոր ուխտի արեան փոխելու ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի՞նչ հոգեւոր սնունդ կրնանք քաղել այսօրուայ ավետարանէն:

Յիսուս Կանայի հարսանիքին մասնակցելով՝ ուզեց նախ եւ առաջ օրհնել պսակը այր մարդուն եւ կնկան միջեւ, յիշեցնելով անոնց եւ մեզի որ պսակը Աստուածային խորհուրդ է. Աստուած զայն ուզեց եւ օրհնեց:

Ինչպէս որ գինին էական է բոլոր խնճոյքներուն եւ ուրախութիւններուն, նոյնպէս ալ սերը հիմնական է, նամանաւանդ կեդրոնն է ամուսնութեան խորհուրդին: Ասոր համար է որ Ս. Պսակի խորհուրդի ատեն կը կարդանք Պօղոս առաքեալի եփեսացիներուն ընթերցումը, ուր սուրբ Պօղոս կը թելադրէ այրերուն ըսելով. «Այրեր, սիրեցեք ձեր կիները ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին, եւ իր անձը (կեանքը) նուիրեց անոր»:

Ինչպէս որ Մարիամ ըսաւ սպասաւորներուն «Ըրե՛ք ինչ որ հրամայէ ձեզի», եւ սպասաւորները ենթարկուեցան Յիսուսի հրահանգին, նոյնպէս ալ ամուսնութիւն մը չի կրնար գոյատեւել առանց փոխադարձ հնազանդութեան: Այստեղ կը շեշտուի առողջ հնազանդութիւնը, գիտակից հնազանդութիւնը եւ ոչ թէ կոյր հնազանդութիւնը:

Ի վերջոյ, ինչ որ պատահեցաւ Կանայի հարսանիքի ընթացքին, կրնայ նաեւ պատահիլ որեւէ ամուսնութեան ընթացքին: Ամուսնական կեանքը կը սկսի խանդավառութեամբ եւ ուրախութեամբ, սակայն ժամանակի բերմամբ, այդ սկիզբի խանդավառութիւնը,



ինչպէս գինին հարսանիքի ժամանակ, մերթ ընդ մերթ կը սպառի եւ ընտանիքները կը քայքայուին քանի սերը կը մարի: Արդարեւ, Աստուածամայրը հրաւեր կը կարդայ բոլոր զոյգերուն, նամանաւանդ սորապսակ զոյգերուն, որպէսզի Յիսուսը հրաւիրեն իրենց տուններուն մէջ՝ Կանայի հարսանիքին հրաշքը կրկնելու համար, այլ իմաստով գաղջութեան ու անտարբերութեան ջուրը՝ սիրոյ եւ ուրախութեան գինիի, փոխադարձ յարգանքի եւ սիրոյ վերածելու:

Թող որ մեր սիրեցեալ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս Աստուածամօր բարեխօսութեամբ իր փառքը յայտնէ բոլոր տուններուն մէջ: